ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2017 թ. հոկտեմբերի 12 N 183-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ազգային անվտանգության մարմինների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության Արագածոտնի մարզային վարչության պետի 2017 թվականի հոկտեմբերի 11-ի N 30/1281 գրությունը **կարգադրում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Գառնահովիտ համայնքում ուսումնասիրություններ կատարելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին՝ 2017 թվականի հոկտեմբերի 13-ից մինչև հոկտեմբերի 17-ը վերոնշյալ գրությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ իրականացնել ուսումնասիրություններ և եռօրյա ժամկետում արդյունքները ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

Ա.ՍԻՄՈՆՅԱՆ

Հավելված

ՀՀ Արագածոտնի մարզպետի

2017թ. Հոկտեմբերի 12-ի N 183-Ա կարգադրության

Կ Ա Զ Մ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ս.Հովսեփյան – ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ /հանձնաժողովի նախագահ/

Ա.Ավետիսյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

Կ.Ղոնաղչյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության գլխավոր մասնագետ

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար **Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ**